



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԲԱԴԱԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգապ թիվ 44286/12)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

20 հուլիսի 2017թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Բաղայանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
 հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal]՝ Նախագահ,

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ դատավորներ,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ Բաժանմունքի քարտուղարի
 տեղակալ,

2017 թվականի հուլիսի 11-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
 ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
 հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի
 պրն Արմեն Բաղայանի (դիմումատու) կողմից ընդդեմ
 Հայաստանի Հանրապետության 2012 թվականի հունիսի 28-ին Դատարան
 ներկայացված գանգատի (թիվ 44286/12) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ
 տկն Լ. Սահակյանը եւ պրն Ռ. Սահակյանը: Հայաստանի Հանրապետության
 կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների
 եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության
 լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2013 թվականի սեպտեմբերի 11-ին դիմումատուի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի մասով ներկայացված բողոքն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատի մնացած մասը հայտարարվել է անընդունելի՝ Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետին համապատասխան:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1976 թվականին Եւ բնակվում է Մեծամորում:

5. 2011 թվականի հուլիսի 23-ին դիմումատուն ձերբակալվել է իր նախկին կնոջ դեմ հարուցված քրեական գործով քննիչի դեմ բռնություն գործադրելու սպառնալիքի կասկածանքով:

6. 2011 թվականի հուլիսի 25-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել նույն հանցագործության համար:

7. Նույն օրը քննիչը դիմել է Արմավիրի մարզային դատարան՝ դիմումատուին երկու ամիս ժամկետով կալանավորելու միջնորդությամբ:

8. Նույն օրը Մարզային դատարանը քննել Եւ բավարարել է քննիչի միջնորդությունը՝ դիմումատուի նկատմամբ նշանակելով կալանք՝ երկու ամիս ժամկետով, մասնավորապես՝ մինչեւ 2011 թվականի սեպտեմբերի 23-ը: Այն միջնորդությունը համարել է հիմնավորված, քանի որ դիմումատուն մասնակիորեն ընդունում էր իր մեղքը, Եւ գործի նյութերը բավարար հիմք էին տալիս ենթադրելու, որ նա կարող է թաքնվել Եւ խոչընդոտել քննությունը՝ հաշվի առնելով տվյալ հանցագործության բնույթը Եւ վտանգավորության աստիճանը:

9. Չնշված ամսաթվին դիմումատուն բողոքարկել է կալանավորման մասին որոշումը՝ պահանջելով վերացնել այն՝ պնդելով, որ վարույթն իրականացնող մարմինը որեւէ նյութ կամ ապացույց ձեռք չի բերել՝ իրեն կալանավորելու մասին միջնորդությունը հիմնավորելու համար, Եւ իր՝ դիմումատուի անձը հաշվի չի առել:

10. 2011 թվականի օգոստոսի 11-ին Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ դիմումատուի կալանավորումը հիմնված է եղել հիմնավոր կասկածի վրա, եւ Մարզային դատարանի կողմից կալանավորման համար նշված հիմքերը համարել է բավարար: Այն նաեւ նշել է, որ դիմումատուի պատշաճ վարքագիծն ապահովելու համար խափանման ավելի թեթեւ միջոցները բավարար չեն լինի:

11. 2011 թվականի օգոստոսի 19-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշման դեմ:

12. 2011 թվականի սեպտեմբերի 9-ին դիմումատուի գործով նախնական քննությունն ավարտվել է, եւ գործը դատական քննության համար ուղարկվել է Մարզային դատարան:

13. 2011 թվականի սեպտեմբերի 13-ին դիմումատուի քրեական գործով կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում: Նույն որոշմամբ առաջին ատյանի դատարանը որոշել է «անփոփոխ թողնել» դիմումատուի նկատմամբ նախնական կալանք նշանակելու մասին որոշումը:

14. 2011 թվականի սեպտեմբերի 17-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրել է դիմումատուի վճռաբեկ բողոքը, քանի որ այն հիմնավորված չի եղել եւ չի համապատասխանել օրենքով սահմանված ձեւական պահանջներին:

15. Չնշված ամսաթվին դիմումատուն դիմել է Մարզային դատարան՝ իրեն կալանքից ազատելու մասին միջնորդությամբ: Նա պնդել է, *inter alia* (ի թիվս այլնի), որ իրեն կալանքի տակ պահելու համար բավարար հիմքեր չկան:

16. 2011 թվականի դեկտեմբերի 13-ին Մարզային դատարանը քննել եւ մերժել է այդ միջնորդությունը: Մարզային դատարանը գտել է, որ դիմումատուի կալանավորումը հիմնված է եղել դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման վրա: Այն նաեւ նշել է, որ գործում առկա նյութերը բավարար են՝ եզրակացնելու համար, որ դիմումատուի կալանավորումը հիմնավորված է եղել:

17. 2011 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոքարկել է այս որոշումը:

18. 2011 թվականի դեկտեմբերի 28-ին Վերաքննիչ քրեական դատարանը բողոքը թողել է առանց քննության: Վերաքննիչ քրեական դատարանը գտել է, որ ներպետական օրենսդրությունը չի նախատեսում Մարզային դատարանի՝ «դիմումատուի նկատմամբ կալանք նշանակելու մասին որոշումն անփոփոխ թողնելու մասին» որոշումը բողոքարկելու հնարավորություն:

19. Դիմումատուն բողոքարկել է այս որոշումը:

20. 2012 թվականի մարտի 20-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի բողոքը վարույթ չի ընդունել՝ հիմքերի բացակայության պատճառով:

21. 2012 թվականի մայիսի 11-ին դիմումատուն դիմել է Մարզային դատարան՝ իրեն կալանքից ազատելու նոր միջնորդությամբ: Նա պնդել է, *inter alia*, որ իր դեմ ապացույցների հավաքման գործընթացն ավարտված է, եւ որ իրեն կալանքի տակ պահելու բավարար հիմքեր չկան:

22. 2012 թվականի հունիսի 4-ին Մարզային դատարանը մերժել է դիմումատուի միջնորդությունը՝ հաշվի առնելով ենթադրյալ հանցագործության վտանգավորության աստիճանն ու բնույթը եւ այն փաստը, որ դիմումատուն կարող էր թաքնվել եւ խոչընդոտել քննությունը:

23. 2012 թվականի հունիսի 14-ին դիմումատուն բողոքարկել է այդ որոշումը:

24. 2012 թվականի հունիսի 19-ին Վերաքննիչ քրեական դատարանը դիմումատուի բողոքը թողել է առանց քննության այն նույն հիմքերով, որոնք նշված են դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման մեջ:

25. Դիմումատուն բողոքարկել է այդ որոշումը:

26. 2012 թվականի օգոստոսի 17-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի բողոքը վարույթ չի ընդունել՝ հիմքերի բացակայության պատճառով:

27. 2012 թվականի օգոստոսի 6-ին Մարզային դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել նրան առաջադրվող հանցագործությունը կատարելու մեջ՝ դատապարտելով նրան ազատազրկման՝ մեկուկես տարի ժամկետով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին)

28. Քրեական դատավարության օրենսգրքի՝ նախնական կալանք եւ խափանման այլ միջոցներ կիրառելու վերաբերյալ համապատասխան դրույթները նկարագրված են Դատարանի՝ Արա Հարությունյանի վերաբերյալ գործով վճռում (տե՛ս *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի [Ara Harutyunyan v. Armenia]*, թիվ 629/11, §§ 30-37, 2016 թվականի հոկտեմբերի 20):

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

29. Դիմումատուն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա բողոքել է, որ իրեն կալանավորելու եւ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարանների որոշումները հիմնավորված չեն եղել, ինչը հանգեցրել է նրա չհիմնավորված եւ երկարատեւ կալանավորմանը:

30. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում դատաքնության իրավունք կամ մինչեւ դատաքնության ավարտն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքնության ներկայանալու երաշխիքներով»:

31. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի փաստարկը:

Ա. Ընդունելիությունը

32. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության բոլոր հասանելի եւ արդյունավետ ներպետական միջոցները, քանի որ 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշման դեմ ներկայացված նրա վճռաբեկ բողոքը չի համապատասխանել ձեական պահանջներին եւ այդ պատճառով 2011 թվականի սեպտեմբերի 17-ին վերադարձվել է Վճռաբեկ դատարանի կողմից՝ չհիմնավորված լինելու եւ օրենքի պահանջներին չհամապատասխանելու հիմքով: Ուստի նրա գանգատը պետք է հայտարարվի անընդունելի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի հիման վրա՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հիմքով:

33. Դիմումատուն պնդել է, որ ինչ վերաբերում է այն փաստին՝ արդյոք իրեն կալանավորելու մասին սկզբնական որոշման մասով ինքը սպառել է իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, իրեն կալանքի տակ պահելու ժամկետը հետագայում երկարացվել է առաջին ատյանի դատարանի կողմից, եւ այդ երկարացման մասով իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցներն ինքն սպառել էր: Վճռաբեկ դատարանը կարող էր նաեւ դիմումատուից պահանջել շտկել իր բողոքում առկա ձեական սխալները, որի հնարավորությունը նախատեսվում է օրենքով, եւ որը նախկինում կիրառվել է Վճռաբեկ դատարանի կողմից: Ուստի Կառավարության առարկությունն անհիմն է եւ պետք է մերժվի:

34. Դատարանը համաձայն է դիմումատուի հետ: Նույնիսկ եթե ենթադրենք, որ դիմումատուն իրեն կալանավորելու մասին սկզբնական որոշման մասով չի օգտագործել իրավական պաշտպանության ներպետական՝ իրեն հասանելի բոլոր արդյունավետ միջոցները, այդ միջոցներն օգտագործվել են առաջին ատյանի դատարանի՝ դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման մասով: Հետեւաբար Կառավարության նախնական առարկությունը պետք է մերժվի: Այսպիսով, գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի իմաստով անընդունելի չէ: Դատարանը նաեւ

նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

35. Դիմումատուն պնդել է, որ Կառավարությունը որեւէ փաստական հիմք չի ներկայացրել՝ հիմնավորելու համար, որ ներպետական դատարանների կողմից կալանավորման համար ներկայացված պատճառաբանությունները եղել են «հիմնավոր» եւ «բավարար»: Ներպետական դատարանների կողմից այդ հիմքերը նշվել են վերացական ձեւով՝ առանց կալանավորումը կամ դրա երկարացումը հիմնավորող փաստերի ներկայացման: Սա հակասել է նույնիսկ ներպետական նախադեպային իրավունքին, քանի որ Վճռաբեկ դատարանը դեռեւս 2008 թվականին սահմանել է կալանավորման պատճառների նոր եւ ավելի բարձր չափանիշ՝ նշելով, որ դրանք պետք է հիմնված լինեն փաստերի, այլ ոչ թե վերացական եզրակացությունների կամ դատավարական օրենսդրության նորմերի հղումների վրա: Ուստի դիմումատուի կալանավորմամբ խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

36. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի կալանքի ժամկետը չի հակասել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված «ողջամիտ ժամկետին», եւ որ ներպետական դատարանները պատճառաբանել են դիմումատուի կալանավորումը: Դիմումատուին կալանավորելու վերաբերյալ սկզբնական որոշումը հիմնված է եղել այն փաստի վրա, որ վտանգ կար, որ դիմումատուն կարող էր թաքնվել, խոչընդոտել գործի քննությունը կամ այլ իրավախախտումներ կատարել: Դատարանի նախադեպային իրավունքում այս բոլոր հիմքերն ընդունվել են որպես «հիմնավոր» եւ «բավարար»՝ կալանավորումը հիմնավորելու համար: Ներպետական դատարանները դիմումատուին կալանավորելու անհրաժեշտությունը եւ կալանքի ժամկետի երկարացումը

հիմնավորել են ենթադրյալ հանցագործության վտանգավոր բնույթով եւ ծանրությամբ, որի համար սահմանվում է ազատազրկում՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, ինչը մեծացրել է դիմումատուին կալանքից ազատելու դեպքում նրա՝ քրեական պատասխանատվությունից եւ պատժից խուսափելու հավանականությունը: Ավելին, դիմումատուն սպառնացել էր բռնություն գործադրել քննիչի նկատմամբ: Ուստի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում տեղի չի ունեցել:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

37. Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան իր հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, հիմնավոր կասկածի շարունակական առկայությունն առ այն, որ ձերբակալված անձը կատարել է հանցանք, շարունակական կալանքի իրավաչափության համար *sine qua non* (պարտադիր պայման) է, սակայն որոշ ժամանակ անց այն դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերով շարունակվում է հիմնավորված լինել ազատությունից զրկելը: Այն դեպքում, երբ նման հիմքերը «հիմնավոր» են եւ «բավարար», Դատարանը պետք է պարզի նաեւ, թե ազգային իրավասու մարմինները վարույթն իրականացնելիս դրսեւորել են արդյոք «պատշաճ ջանասիրություն» (տե՛ս, ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, *Լաբիթան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Labita v. Italy* [GC]], թիվ 26772/95, § 153, ՄԻԵԴ 2000-IV, եւ *Իդալովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [*Idalov v. Russia* [GC]], թիվ 5826/03, § 140, 2012 թվականի մայիսի 22):

38. Դատարանը նաեւ վճռել է, որ կալանքի ցանկացած ժամկետի համար հիմնավորումը, անգամ եթե այդ ժամկետը շատ կարճ է, պետք է համոզիչ ձեւով տրվի համապատասխան մարմինների կողմից: Հիմնավոր կասկածի

առկայությունից բացի՝ դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից կալանավորման համար «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ ներկայացնելու պահանջն արդեն իսկ կիրառելի է նախնական կալանք նշանակելու մասին առաջին որոշումը կայացնելու ժամանակ, այսինքն՝ ձերբակալելուց հետո «անհապաղ» կերպով (տե՛ս *Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [ՄՊ] [*Buzadji v. the Republic of Moldova* [GC]], թիվ 23755/07, § 87 եւ § 102, 2016 թվականի հուլիսի 5): Ընդ որում, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս համապատասխան մարմինները պարտավոր են դիտարկել այլընտրանքային միջոցներ՝ դատաքննությանը նրա ներկայությունն ապահովելու համար (տե՛ս *Յաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի* [*Jablonski v. Poland*], թիվ 33492/96, § 83, 2000 թվականի դեկտեմբերի 21, եւ *Իդալովի* գործը՝ վերելում հիշատակված, § 140):

39. Դատարանի նախադեպային իրավունքում «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ համարվող հիմնավորումները ներառել են այնպիսի հիմքեր, ինչպիսիք են թաքնվելու վտանգը, վկաների վրա ներգործելու նպատակով ճնշում գործադրելու կամ կեղծված ապացույցների վտանգը, նախնական համաձայնության գալու ռիսկը, կրկին հանցագործություն կատարելու վտանգը, հասարակական կարգը խախտելու վտանգը եւ կալանավորված անձին պաշտպանելու անհրաժեշտությունը (տե՛ս, օրինակ, *Շթոգմյուլլերն ընդդեմ Ավստրիայի* [*Stögmüller v. Austria*], 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք Ա թիվ 9, *Վեմհոֆֆն ընդդեմ Գերմանիայի* [*Wemhoff v. Germany*], 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք Ա թիվ 7, *Թոմասին ընդդեմ Ֆրանսիայի* [*Tomasi v. France*], 1992 թվականի օգոստոսի 27, § 95, շարք Ա թիվ 241-Ա, *Թոթն ընդդեմ Ավստրիայի* [*Toth v. Austria*], 1991 թվականի դեկտեմբերի 12, § 70, շարք Ա թիվ 224, *Լեթելիերն ընդդեմ Ֆրանսիայի* [*Letellier v. France*], 1991 թվականի հունիսի 26, § 51, շարք Ա թիվ 207, եւ *Ի.Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի* [*I.A. v. France*], 1998 թվականի սեպտեմբերի 23, § 108, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1998-VII*):

40. Կանխավարկածը միշտ պետք է գործի՝ հոգուտ ազատ արձակման: Ազգային դատական մարմինները պետք է, հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, ուսումնասիրեն հանրային շահի վերոնշյալ պահանջի առկայությանը հակասող կամ այն հաստատող կամ 5-րդ հոդվածի կանոնից շեղումը հիմնավորող բոլոր փաստերը եւ պետք է դրանք նշեն ազատ արձակման միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում: Հիմնականում այդ որոշումներում ներկայացված պատճառների եւ դիմումատուի կողմից իր բողոքներում փաստաթղթերով լավ հիմնավորված փաստերի հիման վրա է, որ Դատարանը ձեռնամուխ է լինում որոշելու այն հարցը, թե արդյոք տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, թե՛ ոչ (տե՛ս, ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, *Բուզաջի* գործը, վերելում հիշատակված, § 89 եւ § 91): Ազատ արձակելուն կողմ եւ դեմ փաստարկները չպետք է լինեն ընդհանուր եւ վերացական (տե՛ս, ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, *Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի* [*Smirnova v. Russia*], թիվ 46133/99 եւ 48183/99, § 63, ՄԻԵԴ 2003-IX (քաղվածքներ), *Բեկչեւն ընդդեմ Մոլդովայի* [*Becciev v. Moldova*], թիվ 9190/03, § 56, 2005 թվականի հոկտեմբերի 4, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* [*Piruzyan v. Armenia*], թիվ 33376/07, § 92, 2012 թվականի հունիսի 26, *Չայիդովն ընդդեմ Ադրբեջանի* [*Zayidov v. Azerbaijan*], թիվ 11948/08, § 57, 2014 թվականի փետրվարի 20, եւ *Մերչեպն ընդդեմ Խորվաթիայի* [*Merčep v. Croatia*], թիվ 12301/12, § 79, 2016 թվականի ապրիլի 26):

41. Մեղադրյալի թաքնվելու վտանգը չի կարող գնահատվել միայն նրան սպառնացող պատժի խստությամբ: Այն պետք է գնահատել՝ վկայակոչելով մի շարք այլ վերաբերելի գործոններ, որոնք կարող են հաստատել թաքնվելու վտանգի առկայությունը, կամ որոնց պարագայում այդ վտանգը կարող է այնքան չնչին թվալ, որ բավարար չլինի մինչդատական կալանքը հիմնավորելու համար (տե՛ս, ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, *Լեթելիերի* գործը՝ վերելում հիշատակված, § 43, *Բեկչեւի* գործը՝ վերելում հիշատակված, § 58, *Փիրուզյանի* գործը՝ վերելում հիշատակված, § 95, եւ *Չայիդովի* գործը՝ վերելում

հիշատակված, § 59): Պետք է հաշվի առնել ներգրավված անձի բնութագիրը, նրա բարոյական հատկանիշները, տունը, զբաղվածությունը, գույքը, ընտանեկան կապերը եւ ցանկացած կապ այն երկրի հետ, որտեղ նա հետապնդվում է, ինչպես նաեւ անձի միջազգային կապերը (տե՛ս, ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, *Նոյմայսթերն ընդդեմ Ավստրիայի* [*Neumeister v. Austria*], 1968 թվականի հունիսի 27, § 10, շարք Ա թիվ 8, եւ *Բուլաջիի* գործը՝ վերետում հիշատակված, § 90):

42. Ավելին, վարույթի պատշաճ իրականացումը մեղադրյալի կողմից խոչընդոտելու վտանգը չի կարող որպես հիմք ընդունվել *in abstracto* (վերացական ձեով). այն պետք է հիմնավորել փաստական ապացույցներով (տե՛ս *Տրզասկան ընդդեմ Լեհաստանի* [*Trzaska v. Poland*], թիվ 25982/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11, *Բեկչեւի* գործը՝ վերետում հիշատակված, § 59, *Փիրուլյանի* գործը՝ վերետում հիշատակված, § 96, եւ *Մերչեպի* գործը՝ վերետում հիշատակված, § 89):

բ) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործով

43. Դիմումատուն սույն գործով պնդել է, որ ներպետական դատարանները նրա նկատմամբ կալանք նշանակելու եւ դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար չեն ներկայացրել «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ՝ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Դատարանն ի սկզբանե նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանվում են խափանման միջոցի, այդ թվում՝ կալանքի նշանակման հիմքերը: Դրանք, ինչպես երեւում է, նման են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Դատարանի նախադեպային իրավունքում սահմանված հիմքերին: Ընդ որում, Օրենսգրքի 136-րդ հոդվածով պահանջվում է, որ կալանավորման մասին որոշումը լինի պատճառաբանված եւ բովանդակի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում:

44. 2011 թվականի հուլիսի 25-ին Մարզային դատարանը բավարարել է դիմումատուին կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը եւ որոշում է կայացրել նրան երկու ամիս ժամկետով, մասնավորապես՝ մինչեւ 2011 թվականի սեպտեմբերի 23-ը կալանավորելու մասին: Այսպես վարվելով՝ Մարզային դատարանը, հիմնավոր կասկածի առկայությունից բացի, դիմումատուի կալանավորման համար հիմք է համարել նրա կողմից թաքնվելու եւ քննությունը խոչընդոտելու վտանգը:

45. Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը բավարարվել է իր որոշման մեջ վերացական եւ կարծրատիպային ձեւով այս հիմքերը նշելով՝ չներկայացնելով որեւէ պատճառ, այդ թվում՝ փաստ կամ ապացույց առ այն, թե ինչու է այն համարում այդ հիմքերը հիմնավորված դիմումատուի գործով, եւ հիմնականում իր պատճառաբանությունը պարզապես սահմանափակելով Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համապատասխան մասերի հիշատակմամբ (տե՛ս վերելում՝ 8-րդ պարբերությունը): Որեւէ բացատրություն չի տրվել առ այն, թե ինչու է դատարանը քննիչի միջնորդությունը համարել հիմնավորված, կամ թե ինչու է դա անհրաժեշտ եղել: Մարզային դատարանը հաշվի չի առել այնպիսի կարեւոր գործոններ, ինչպիսիք են քննության ընթացքում դիմումատուի վարքագիծը եւ անձնական բնույթի հանգամանքները, ինչպես նաեւ որեւէ այլ վերաբերելի հանգամանք: Այն նաեւ չի ուսումնասիրել դիմումատուի կողմից արված որեւէ առարկություն եւ չի դիտարկել նրան գրավով կալանքից ազատելու հնարավորությունը:

46. Դատարանը նշում է, որ դիմումատուի բողոքները եւ իրեն կալանքից ազատելու մասին միջնորդությունները, ինչպես նաեւ հետագայում դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը դատարանների կողմից քննվել են միեւնույն ձեւով (տե՛ս վերելում՝ 10-րդ, 13-րդ, 16-րդ եւ 22-րդ պարբերությունները): Դատարանը հաճախ է հայտնաբերել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, երբ տեղական դատարանները երկարացրել են դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը՝ հիմնականում հիմնվելով

մեղադրանքների ծանրության վրա եւ օգտագործելով կարծրատիպային ձեւակերպումներ՝ չանդրադառնալով կոնկրետ գործով փաստերին կամ չդիտարկելով խափանման այլընտրանքային միջոցներ (տե՛ս, ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, *Սմիրնովայի* գործը՝ վերելում հիշատակված, § 70, *Վասիլկոսկին եւ այլք ընդդեմ «Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության»* [*Vasilkoski and Others v. “the former Yugoslav Republic of Macedonia”*], թիվ 28169/08, § 64, 2010 թվականի հոկտեմբերի 28, եւ *Տրետյակովն ընդդեմ Ուկրաինայի* [*Tretyakov v. Ukraine*], թիվ 16698/05, § 59, 2011 թվականի սեպտեմբերի 29):

47. Դատարանը նշում է, որ մոտ տասներկու ամիս կալանքի տակ գտնվելուց հետո դիմումատուն մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել է մեկուկես տարվա ազատազրկման (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը): Երբեւէ չի ներկայացվել որեւէ հիմնավորում առ այն, թե ինչու հնարավոր չի եղել դիմումատուին կալանքից ազատել նախնական քննության կամ դատաքննության ընթացքում:

48. Վերջապես Դատարանը նշում է, որ կալանք նշանակելիս եւ դրա ժամկետը երկարացնելիս կարծրատիպային ձեւակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում, եւ արդեն մի շարք գործերով հայտնաբերվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում (տե՛ս *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* [*Piruzyan v. Armenia*], թիվ 33376/07, §§ 97-100, 2012 թվականի հունիսի 26, *Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Malkhasyan v. Armenia*], թիվ 6729/07, §§ 74-77, 2012 թվականի հունիսի 26, եւ *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* [*Sefilyan v. Armenia*], թիվ 22491/08, §§ 88-93, 2012 թվականի հոկտեմբերի 2, *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* [*Ara Harutyunyan v. Armenia*]՝ վերելում հիշատակված, §§ 54-62):

49. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը կարծում է, որ ներպետական դատարանները, հիմնավոր կասկածի առկայությունից բացի, չեն ներկայացրել հիմնավոր եւ բավարար հիմքեր՝ դիմումատուի նկատմամբ կալանք նշանակելու եւ դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար:

50. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

51. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

52. Դիմումատուն պահանջել է 6,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

53. Կառավարությունը համարել է, որ դիմումատուն ոչ նյութական վնասի վերաբերյալ իր պահանջը չի հիմնավորել պատճառաբանված եւ փաստաթղթերով հիմնավորված փաստարկներով: Ամեն դեպքում նրա պահանջը անհիմն է եւ ուստի պետք է մերժվի: Այնուամենայնիվ, եթե Դատարանը որոշի ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում շնորհել, ապա խախտման արձանագրումն ինքնին բավարար կլինի՝ որպես արդարացի փոխհատուցում: Ամեն դեպքում դիմումատուի պահանջը չափազանցված է:

54. Դատարանը կարծում է, որ հայտնաբերված խախտման հետեւանքով դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս: Ուստի այն դիմումատուին շնորհում է 3,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

55. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի փոխհատուցման պահանջ չի ներկայացրել:

Գ. Ջկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

56. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանաձև լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում.

3. Վճռում է, որ՝

ա) պատասխանող Պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին ոչ նյութական վնասի դիմաց վճարի 3,000 եվրո (երեք հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող Պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2017 թվականի հուլիսի 20-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեգեներ
Քարտուղարի տեղակալ

Ալեշ Պեյխալ
Նախագահ